



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 21 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹԹԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Արդարահատոյց Աստուած, ցոյց տուր արդարութիւնդ:
Ել, ով Ռատաւոր ամբողջ աշխարհի, ամբարտաւան մարդոց հատուցանէ արժանին:
Մինչեւ ե՞րբ, Տէր, մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,
չարագործները գոռոզ խօսքերով պիտի արտայայտուին,
եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:
Քու ժողովուրդդ կը ճգմեն, ո՞վ Տէր, կը չարչարեն քեզի պատկանողները,
այրիներն ու պանդուխտները կը սպաննեն,
եւ որբերը կը կոտորեն, ըսելով.- «Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը
այս բաներուն ուշադրութիւն չի դարձներ»:
Յիմար մարդիկ, հասկցէք, դուք՝ անմիտներ, ե՞րբ պիտի սորվիք:
Ան՝ որ ականջը ստեղծեց՝ ինք չի՞ լսեր,
ան՝ որ աչքը գոյացուց՝ ինք չի՞ տեսներ:
Ան՝ որ ազգերը կը սաստէ եւ իր գիտութեան մէջ կը դաստիարակէ՝
նաեւ զանոնք պիտի չդատապարտէ՞:
Տէրը գիտէ ինչ որ մարդիկ կը խորհին,
եւ անոնց խորհուրդներուն ոչնչութիւն ըլլալը:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹԹԵ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ
8 ԳԼԽ

ԴԱՆԻԷԼԻ ՏԵՍԻԼՔԸ ԽՈՅԻ ԵՒ ԶՕՇԻ (8:1-27)

Մարդկային պարմութեան ընթացքին, յաճախ պերություններ, կայսրություններ, որոնք որքան ալ զօրաւոր կը սկսին, կ'ըլլան, բայց նաեւ աւարտ կ'ունենան: Ահա Դանիելի տեսած այս տեսիլքը ցոյց կու տայ վերջին ժամանակներուն պարահեղիքը, որ սակայն տակաւին ժամանակը չէ հասած, որուն համար ալ հետեւեալ պատուերը կը ստանայ Դանիել. «Իրիկուան ու առտուան տեսիլքը, ճշմարիտ է, բայց դուն տեսիլքը զոցէ, քանզի վերջին օրերուն համար է»: «Գոցէ» նաեւ կը նշանակէ կնքէ, որովհետեւ տակաւին ժամանակը չէ հասած որպէսզի կարարուի: Այնպէս ինչպէս կը կարդանք Յայտնութիւն Յովհաննոս գիրքին մէջ արձանագրուած տեսիլքներու մասին, որոնց համար Յովհաննէս կու լար որ մէկը չկայ, որ այդ կնքուած գիրքը բանայ: Կնքուած գիրքը պէտք է որ բացուի, որպէսզի գրուածները կարարուին:

Որքան ալ ոյժը եւ զօրութիւնը ունի մարդ անհաւրը, որ կու գայ գահին, բայց կայ հասարակաց վախճանը իւրաքանչիւր մարդ արարածի: Ահա այսպիսի վախճան ունեցաւ Մեծն Աղեքսանդրը, որուն մասին է նաեւ այստեղ ըսուած տեսիլքը, որ 32 տարեկանին անգաւակ մեռաւ, եւ իր կայսրութիւնը 4 մասի բաժնուեցաւ, իր հրամանատարներուն միջեւ: Եւ ահա անոնցմէ փոքրը, Անտիոքոս Եպիփանէս, որ պիտի յարձակէր հարաւ՝ Եգիպտոսի վրայ, Արեւելք՝ Պարսկաստանի վրայ, եւ դէպի փառաւոր երկիրը՝ Յուդայի եւ Երուսաղէմի վրայ, ինքզինք Աստուծոյ տեղը դնելով, տաճարը աւերելով, Ն.Ք. 168 թ, եւ տաճարին մէջ կանգնեցնելով Զէւսի արձանը, եւ կոտորելով, ջարդելով, կողոպելով եւ պարտադրելով հեթանոսական պաշտամունքը: Մանաւանդ պղծելով տաճարը երբ գոհասեղանին վրայ խոզ պիտի գոհեր: Այս բոլորը սակայն պիտի տեսնէ 2300 օր, այսինքն՝ մէկ այլ ուրիշ բացատրութեան՝ ժամանակ, ժամանակներ ու կէս ժամանակ (Դանիել 7:25): Անտիոքոս Եպիփանէս տակաւին պիտի կոտորէր Իսրայէլի քահանայից դասը:

Մինչեւ ե՛րբ: Հարցում մը, որ մինչեւ այսօր կը հարցնենք երբ կը տեսնենք անօրէնութեան բազմացումը, կոտորածներ, ջարդ, աւեր, պղծութիւն: Այս բոլորը սակայն պիտի որ վերջ ունենան:

Դանիել երբ այս տեսիլքը կը տեսնէ, կ'ուզէ բացատրութիւն մը ունենալ: Այս տեսիլքին բացատրութիւնը միայն Աստուծոյ կրնայ տալ, որպէսզի ճշգրիտ հասկնայ, ոչ թէ միայն եղածին մասին, այլ նաեւ անոր նպատակին, ու մանաւանդ այդ բոլորին մէջ տեսնելու Աստուծոյ ծրագիրը:

Ինչպէս Դանիելի պարագային, մեզմէ իւրաքանչիւրը ունի հետաքրքրութիւն, յաճախ նաեւ ընդվզում, պոռթկում, գիտնալու, իմանալու այս բոլորի մասին, նպատակը, պարճառը, ու մանաւանդ Աստուծոյ թոյլտւութիւնը, թէ արդեօք Աստուծոյ ինչո՞ւ կ'արտօնէ կամ չի միջամտեր, որպէսզի վերջ դրո՞ւն այս բոլորը: Ահա հրեշտակն է, որ կու գայ բացատրելու եւ Դանիելին տալու իմաստը տեսիլքին:

Դանիելը աչքերով տեսաւ տեսիլքը, բայց չկրցաւ հասկնալ, այնպէս ինչպէս յաճախ մենք աչքերով կը կարդանք Աստուծոյ խօսքը, բայց սրտով չենք հասկնար անոր բովանդակութիւնը: Ահա Տէրը կը հրամայէ Գաբրիէլ հրեշտակին, որպէսզի տեսիլքը բացատրէ: Այս բոլոր տեսածներդ անմիջապէս պիտի չկարարուին, անոր համար ալ պէտք է որ կնքուին, մինչեւ որ յարմար ժամանակը գայ:

Ի վերջոյ, Դանիել ի տես այդ տրուածներուն, քանի մը օր կը հիւանդանայ: Ինչո՞ւ: Ոչ թէ միայն տեսիլքի ահաւորութենէն, այլ անոր հետեւանքներէն, որ գալիք սերունդը պիտի կրէ: Պօղոս Առաքեալի բացատրութեամբ՝ Դանիել լացողներուն հետ հիմա արդէն կու լայ: